Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 17. Համայնքային ծառայության ստաժը

1. Համայնքային ծառայության ստաժը ներառում է համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու, աշխատակազմերում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

Համայնքային ծառայության ստաժը չի ներառում սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու, օրենքի խախտմամբ աշխատակազմերում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

2. Համայնքային ծառայության ստաժը հաշվարկվում է համայնքային ծառայողի ընդհանուր աշխատանքայինստաժում: Համայնքային ծառայության ստաժը հաշվարկվում է նաև համայնքային ծառայողի մասնագիտականաշխատանքային ստաժում, եթե այն համապատասխանում է ստացած բարձրագույն կրթությանը:

3. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հանրային պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է համայնքային ծառայության ստաժին:

4.Պարտադիր ժամկետային զինծառայողների «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար:

(17-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 30.09.08 ՀՕ-172-Ն, խմբ., փոփ. 08.12.11 ՀՕ-347-Ն, 05.02.13 ՀՕ-4-Ն, խմբ. 21.01.20 ՀՕ-22-Ն)